ՀԱՆԳԻՍՏ

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՆԱՀԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

(1881—1959)

Օգոստոսի 4-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց Ս. Էջմիածնի աթոռանվեր միաբան հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1881 թվականին Էջմիածնի շրջանի Ներքին Զեյվա գյուղում, հողագործի ընտանիքում և իր նախնական կրթությունը ստացել Երևանի թեմական դպրոցում։

Ուսումն ավարտելուց հետո վերադառնում է գյուղ, որտեղ զբաղվում է ուսուցչությամբ և ազատ ժամերին այգեգործությամբ, հողի մշակությամբ։

1915 թվականին ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1918 թվականին քահանա՝ Երևանի առաջնորդ Տ. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի ձեռամբ։

1918—1945 թվականներին քահանայագործում է զանազան շրջաններում, որպես պարտաճանաչ և նվիրված հոգևորական։

1946 թվականին, երեցկնոջ մահից հետո, դիմում Գևորգ Զ Կաթողիկոսին՝ Մայր Աթոռի միաբան դառնալու ցանկությամբ և այդ օրվանից մինչև իր մահը լինում է Մայր Աթոռի նվիրյալ և համեստ միաբաններից մեկը։

Հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետը Մայր Աթոռում կոչվում է պատասխանատու պաշտոնների և խղճի մտոք ու արդյունավետությամբ ծառայում Ս. Էջմիածնին։ Երկար ժամանակ նա եղել է Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե, ինչպես նաև Ս. Գեղարդա վանքերի վանահայր։

Հանգուցյալ հայր սուրբը համեստ, ազնիվ, բոլորից սիրված և հարգված միաբան էր և իր աշխատանքը տանում էր լուռ ու խաղաղ։ Նա իր ազնիվ և նվիրված աշխատանքների համար արժանացել էր ծաղկյա փիլոնի և վարդապետական լանջախաչի՝ Գևորգ Զ և Վազգեն Ա կաթողիկոսների կողմից։

Նահապետ վարդապետը սիրում էր Մայր Աթոռը։ Նա իր խնայողությունները թողել է Մայր Աթոռին, որպես դեպի Ս. Էջմիածինը ունեցած իր որդիական երախտագիտության վառ արտահայտությունը։

Աթոռանվեր այս ազնիվ միաբանի հիշատակը միշտ պայծառ կմնա Մայր Աթոռում։

Ամսի 6-ին, Մայր Աթոռի միաբանության, վանքի պաշտոնեության և իր հարազատների ներկայության կատարվեց հանգուցյալի թաղմանական կարգը Ս. Գայանեի վանքում, նախագահությամբ գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոսի, որը գեղեցիկ դամբանականով վեր հանեց հանգուցյալի աթոռանվեր ծառայությունը։

Հանգուցյալի աճյունը ամփոփվեց Ս. Գայանեի վանքում, Մայր Աթոռի այլ միաբանների շարքում։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։